

---

ԱՆՆԱ ԱՍՍՏԲՅԱՆ. «Արշակ Բ» հայոց անդրանիկ օպերան, *Երևան, «Ոսկան Երևանցի» հրատ., 2006, 268 էջ:*

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ հրատարակվել է արվեստագիտության թեկնածու, երաժշտագետ Աննա Ասատրյանի «Արշակ Բ» հայոց անդրանիկ օպերան» գիրքը: Այն Տիգրան Չուխաճյանի (1837–1898) և Թովմաս Թերզյանի (1840–1909) հեղինակած հայոց առաջին «Արշակ Բ» պատմառամանտիկական օպերայի գիտական առաջին ուսումնասիրությունն է: Ա. Ասատրյանի մենագրությունը հետաքրքիր է ոչ միայն երաժշտագիտական, այլև հայագիտական մի շարք առումներով: Ուշագրավն այն է, որ «Արշակ Բ» օպերայի առաջին բեմադրությունը (նախերգանքը) իրականացավ 1868 թ. Կ. Պոլսում և դարձավ գիտական ուսումնասիրության ու երաժշտարվեստի բացահայտումների սկիզբ: Շուրջ մեկուկես դար առաջ այս ստեղծագործությունը նոր էջ բացեց ազգային երաժշտարվեստի պատմության մեջ, նրա շնորհիվ հայ մշակույթի բազմադարյան պատմության մեջ ձևավորվեց պրոֆեսիոնալ երաժշտական արվեստի սկզբնավորման և զարգացման դպրոցը:

Տ. Չուխաճյանի ազգային երաժշտարվեստի ուղին կապված է եվրոպական երաժշտության գեղարվեստական ավանդույթների հետ: Իտալիայում ստանալով մասնագիտական երաժշտական կրթություն՝ կատարելագործվեց և լիարժեք տիրապետեց կոմպոզիտորական արվեստին: Կոմպոզիտորի 40 տարիների ստեղծագործական գործունեությունը խիստ հազեցած ու լարված է եղել: Բրեն հատուկ ոգևորությամբ Չուխաճյանն ստեղծում է տարբեր ժանրերի երաժշտական գործեր, որոնք հիմնականում ազգային, հերոսական և կենցաղային թեմաներով զրված օպերաներ ու օպերետներ են: Տ. Չուխաճյանի ստեղծագործական անհատականությունը բացահայտվեց «Արշակ Բ» օպերայում, ուր նա ստեղծեց հայրենասիրական ու քնարական կերպարներ: Նա համա-

միտ էր իտալացի կոմպոզիտորի՝ Ջ. Վերդիի հետ, որ օպերային արվեստը նույնպես հայրենասիրական զգացմունքների, ազգային գաղափարների արտահայտման ամբիոն պետք է լինի: Այդ տեսակետից «Արշակ Բ» օպերան ժամանակակից կյանքի հուզող իրադարձությունների ճշմարիտ արձագանքն է:

1860-ականներին արևմտահայերի կյանքում նոր թափ առավ ազգային-ազատագրական շարժումը: Բնչպես գրականության, այնպես և արվեստի առաջադեմ ներկայացուցիչներն իրենց ստեղծագործություններում արտացոլում էին ժողովրդի պատմական անցյալը, հերոսական ու հայրենասիրական դրվագներով ոգեշնչում մարդկանց, արթնացնում հայրենասիրական զգացմունքներ: Տ. Չուխաճյանի երաժշտության և դրամատուրգ, բանաստեղծ, թատերական գործիչ, գրաքննադատ Թովմաս Թերզյանի լիբրետոյի շնորհիվ հռչակվեց հայոց առաջին օպերայի ծնունդը: Ստեղծվեց հայրենասիրական զգացմունքներով լի մի ստեղծագործություն, որի հիմնական գաղափարը հայ ժողովրդի պայքարն է օտարագրի բռնակալների դեմ՝ հանուն ազգային ազատագրության, անկախության, հայոց պետականության հաստատման:

Երաժշտագետ Ա. Ասատրյանի «Արշակ Բ» հայոց անդրանիկ օպերան» մենագրությունն ամբողջական և խոր գիտական ուսումնասիրություն է, ուր դրսևորվում են հեղինակի՝ նյութին տիրապետելու և այն պատմական ու գեղագիտական ճշմարտությամբ ներկայացնելու կարողությունները: Աշխատությունը կազմված է երեք գլխից և երկու հավելվածից: Գրքի առաջին գլխում հեղինակը քննում է դրամատուրգ, թատերական գործիչ, գրական-քննադատ Թովմաս Թերզյանի գործունեությունը, մասնավորապես՝ «Սանդուխտ» ողբերգության բեմադրությունը, որը 50 տարի շարունակ ճանաչվել է որպես ամենաերկար բեմական կյանք

ունեցող պատմական ողբերգություններից մեկը: Ա. Ասատրյանը, վերլուծելով Թերզյան դրամատուրգի ստեղծագործությունները, նշում է, որ վերջինս, գրելով «Արշակ Բ» օպերայի լիբրետոն, դարձավ հայոց անդրանիկ օպերայի լիբրետոյի հեղինակը: Թ. Թերզյանի լիբրետոյի հիմքում ընկած են Մովսես Խորենացու «Հայոց պատմության» կարևոր իրադարձություններն ու սոցիալական բախումները: Խորենացու հերոսը՝ Արշակը, բռնակալ թագավոր է և իր նպատակին հասնելու համար դիմում է բազմաթիվ չարագործությունների: Լիբրետոյի հեղինակը հարագատ է մնացել Մ. Խորենացուն: Ըստ Թերզյանի՝ չար բիրտ բռնակալը կործանվում է իր դաժանություններից տառապածների ձեռքով: Արշակի կերպարի հանդեպ Թերզյանի նման մոտեցումը կապված է 1860-ական թվականներին թուրքական կառավարության կողմից հայերի նկատմամբ սկսված բռնություններով: Թերզյանի եզրակացությունը հստակ ձևակերպում ունի. ցանկացած իշխանություն դատապարտված է կործանման, եթե չի նվիրվում սեփական ժողովրդի խաղաղության ու բարեկամության ապահովման գործին:

Ա. Ասատրյանը նշում է, որ Թերզյանի թատերատեսերը շարադրված է իտալերեն, իսկ հայերեն հրատարակվել է 1871 թ.: Օպերայի լիբրետոն աչքի է ընկնում կոնֆլիկտի խիստ լարված զարգացմամբ, պատկերների սուր հակադրություններով: Լիբրետոյի հատուկ են ռոմանտիկական օպերային բնորոշ՝ դավադրությունների, սպանությունների, թունավորումների, հույզերի և կրքերի բացահայտումների տարրերը: Ամենայն մանրամասնությամբ վերլուծելով Թերզյանի լիբրետոն՝ Ա. Ասատրյանը եզրակացնում է. «Արշակն արդեն ուներ Մակբեթի տենչած իշխանությունն ու փառքը, բայց դարձյալ չարագործ է: Որտեղից է առաջանում չարը մարդու մեջ, ինչպե՞ս է ներթափանցում մարդկային հոգիները, ի՞նչն է մարդկանց ստիպում փչացնել սեփական և ուրիշների կյանքը, սերմանել մահ ու ավերածություն իրենց շուրջը և, ի վերջո, կործանվել՝ չհասնելով իսկական երջանկության» (էջ 55): Հեղինակի այս բնութագրումը հատուկ է միայն այն մարդկանց, ովքեր չեն ուրախանում ու-

րիշների հաջողություններով և իրենց գործած չարությունն էլ կործանում ու կուրացնում է հենց իրենց: Թ. Թերզյանի գաղափարը հոգեհարագատ է մարդկությանը՝ բարության ու արդարության հաղթանակը չարի նկատմամբ: Նա մարդասիրության և առաջադիմության մարմնավորողն է:

Ուսումնասիրության հեղինակը, չթաքցնելով դրական վերաբերմունքը Թ. Թերզյանի «Արշակ Բ» օպերայի լիբրետոյի հանդեպ, կարծում է, որ այն լիովին համապատասխանում է թատրոնի պահանջներին և հազեցած է խոր դրամատիզմով, որը բեմադրողին գործելու լայն հնարավորություններ է տալիս:

1860-ական թվականներին արևմտահայերի կյանքը նշանավորվում է ազգային-ազատագրական շարժման նոր վերելքով: Գրականության և արվեստի առաջադեմ ներկայացուցիչներն իրենց ստեղծագործություններում անդրադառնում են ժողովրդի պատմական անցյալի հայրենասիրական ու հերոսական առանձին դրվագների՝ խանդավառելով մարդկանց և նոր զգացմունքներ արթնացնելով նրանց մեջ: Նման ստեղծագործություն էր նաև «Արշակ Բ» օպերան: Ընդամենը 30 տարեկան էր Չուխաճյանը, որ դարձավ հայ հայրենասիրական օպերայի հիմնադիրը, կերտեց մեղեդիական հարստագույն աշխարհ, ոճական կուռ ձուլվածք, երաժշտական կերպարների վառ համաստեղություն: Օգտվելով իր ժամանակի առաջադեմ երաժշտության մեղեդային հարուստ կարողություններից՝ նա ստեղծեց սեփական, միայն իրեն հատուկ ազգային երաժշտության ոճական լեզուն, որը համապատասխանում էր ն՝ ժամանակի, և՛ օպերային դրամատուրգիական բարդագույն խնդիրներին: Այս օպերային բնորոշ են վերդիական պոռթկումներն ու բեթհովենյան ռեքվիեմների տարրերը: Մուլթանական ռեժիմի պայմաններում բարեկիրթ ու բարեհամբույր Չուխաճյան մտավորականը խիզախեց և ստեղծեց հայկական հերոսական-հայրենասիրական երաժշտական մի գլուխգործոց:

Հայ ժողովրդի վիճակը XIX դ. շատ կողմերով հիշեցնում էր IV դ.՝ երկփեղկված ազգ և բնաջնջման վտանգ: Մարմնավորելով IV դ. ողբերգական դրվագներն ու բախումները՝

«Արշակ Բ»-ն իր ողջ հյուսվածքով ու էությունը կապված է հայ իրականության հետ, արտահայտում է ազգային-ազատագրական իդեալներն ու ձգտումները:

Գրքի երկրորդ գլուխն ամբողջությամբ նվիրված է «Արշակ Բ» օպերային: Վերջինս ազգային մշակույթի ինքնատիպ գլուխգործոցներից է: Զուր չէ, որ Չուխաճյանին հաճախ անվանել են «հայկական Վերդի»: Չուխաճյանի օպերան հայ արվեստի հպարտությունն է: Այն ոչ միայն ազգային, այլև համամարդկային երաժշտական բարձրարվեստ ստեղծագործություն է: Ա. Ասատրյանը վերոնշյալ սկզբունքներին հետևելով է ձեռնարկել օպերայի վերլուծությունը: «Չուխաճյանը թեմայի մեկնաբանման հարցում դրսևորել է մեծ խորություն և ամբողջականություն: Թերզյանի լիբրետոյի հիմնական գաղափարը Չուխաճյանն օպերայում մարմնավորել է գեղարվեստական ընդհանրացման մեծ ուժով՝ պատմական դրաման կոմպոզիտորի ջանքերով դարձել է օպերային արվեստի ուշագրավ ստեղծագործություն» (էջ 112), – գրում է Ա. Ասատրյանը:

Օպերայի երաժշտությունը խոսում է Չուխաճյանի տաղանդի և վարպետության մասին, բխում է հարազատ ազգի, նրա մշակույթի պատմական ակունքներից ու ավանդույթներից:

«Արշակ Բ» օպերայում բավական ցայտուն ներկայացված են ժողովրդական զանգվածային տեսարանները, որոնց գործողություններն ուղեկցվում են երգչախմբի կատարումներով: Այդպիսի պատկերներն ուժեղացնում և խորացնում են օպերայի հասկապես դրամատիկ տեսարանները: Այս գործը պատմականորեն առաջադիմական երևույթ է հայ իրականության մեջ: Կոմպոզիտորը ձգտում է երաժշտության միջոցով բացահայտել իր ժամանակակիցներին խորապես հուզող գաղափարական կարևոր թեմաներ: Եվ այդ խնդիրը Տ. Չուխաճյանը կատարել է փայլուն և բարձր մակարդակով:

Անդրադառնալով «Արշակ Բ» օպերայի հետագա բեմական պատմությանը՝ գրքի հեղինակը բարձր է գնահատում օպերայի արժանիքները հայ և համաշխարհային մշակույթի պատմության մեջ:

Օպերայի պարտիտուրը երկար ժամանակ կորած էր համարվում: 1942 թ. երաժշտագետ Գ. Տիգրանովը հայտնաբերում է այն: Իսկ 1945 թ. նոյեմբերի 17-ին Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնում առաջին անգամ ներկայացվում է օպերան՝ արժանանալով բարձր գնահատականի՝ Պետական (Ստալինյան) մրցանակի: Բեմադրությունն իրականացնում են Արմեն Գուլակյանը և Միքայել Թավրիզյանը: Օպերայում հանդես են եկել երգարվեստի հրաշալի կատարողներ Շարա-Տալյանը (Արշակ), Պավել Լիսիցյանը (Արշակ), Հայկանուշ Դանիելյանը (Օլիմպիա), Տաթևիկ Սազանդարյանը (Փառանձեմ): Նկարչական ձևավորումը կատարել է Պատվական Անանյանը, իսկ պարերը բեմադրել է Բ. Արբատովը: Օպերայի դեկորատիվ ձևավորումը և ճարտարապետական մտահղացումը իրականացրել էր Ն. Տոկարսկին:

Օպերայի առանձին հատվածներ բեմադրվել են Պոլսում, Նեապոլում, Վիեննայում: Իսկ ամբողջությամբ օպերան ունեցել է հինգ բեմադրություն՝ Հայաստանում և արտերկրում: 1956-ի հունիսին, հայ արվեստի տասնօրյակի շրջանակում, օպերան երկրորդ բեմադրությամբ ներկայացվել է Մոսկվայի Մեծ թատրոնում: Ներկայացման ռեժիսորն էր Վավիկ Վարդանյանը, ռեժիսորը՝ Սուրեն Չարեքյանը, նկարչական ձևավորումն իրականացրել էին Աշոտ Միրզոյանն ու Ալեքսանդր Շաքարյանը: Գլխավոր դերերգերով հանդես են եկել Գոհար Գասպարյանը (Օլիմպիա), Միհրան Երկաթը (Արշակ Երկրորդ), Նար Հովհաննիսյանը (Ներսես):

«Արշակ Բ»-ի երրորդ բեմադրությունը տեղի է ունեցել 1971-ին՝ նվիրված հայոց օպերային արվեստի հիմնադրման 100-ամյակին: Ներկայացման դիրիժորն էր Օհան Դուրյանը, նկարիչը՝ Ռոբերտ Նալբանդյանը: Գլխավոր դերերում հանդես են եկել Միհրան Երկաթը (Արշակ Երկրորդ), Գոհար Գասպարյանը (Օլիմպիա), Գոհար Գալաջյանը (Փառանձեմ), Նար Հովհաննիսյանը (Ներսես), Հենրիկ Ալավերդյանը (Վասակ):

1984-ին իրականացվում է օպերայի նոր բեմադրությունը (ռեժիսոր-բեմադրիչ՝ Տիգրան Լևոնյան, դիրիժոր՝ Հովհաննես Չեքիջյան, նկարիչ՝ Եվգենի Սաֆրոնով):

2001 թ. սեպտեմբերին «Արշակ Բ» օպերան Լորիս Ճգնավորյանի ղեկավարությամբ ներկայացվում է Ման Ֆրանցիսկոյում: Բեմադրության աշխատանքներին ներգրավված էին ինչպես հայ (Հասմիկ Պապյան, Տիգրան և Հայկ Մարտիրոսյաններ), այնպես էլ ամերիկացի, ֆրանսիացի, վրացի, կանադացի, բուլղարացի և պարսիկ երգիչներ: Օպերան (հեղինակային մտահղացմամբ) հնչում է հայերեն: Ներկայացման մեջ հանդես են եկել Քրիստոֆեր Ռոբերթսոնը (Արշակ), Հասմիկ Պապյանը (Օլիմպիա), Նորա Կրուպիչը (Փառանձեմ), Ֆիլիպ Ուեյը (Գնեյ), Կորթն Կիթը (Վաղինակ), Տիգրան Մարտիրոսյանը (Ներսես), Դեյվիդ Օքրոլը (Վարդան), Կատյա Էսքալերան (Պոլիքսեն), Ջոն Ադամսը (Տիրան), Բրայան Ջոլլին (Արշակի և Օլիմպիայի որդու ուրվական): Բեմադրությունն առաջ է բերել հակասական կարծիքներ: 2001 թ. նոյեմբերի 14-ին «Նոյոյե վրեմյա» թերթում Մելանյա Աբովյանը գրում է. «Բեմադրությունը զուրկ էր հայկականությունից: Ռազմիկները հագել էին պարսկական թե աֆղանական հանդերձանք: Իշխանուհի Փառանձեմը հառնում է գեղջկուհու զգեստներով, զգզված վարսերով՝ որպես մի վիուկ: Իսկ Արշակ արքան ավելի շատ

հիշեցնում է սափրած գլխով դահիճի: Թագուհի Օլիմպիային իջեցնում են բեմի վրա ու բարձրացնում առյուծի վանդակում...» (էջ 143): «Արշակ Բ» օպերայի ամերիկյան բեմադրությունն ունեցավ ընդամենը 6 ներկայացում և չճառայեց չուխաճյանական օպերայի վերածնունդի հուսալի նպատակներին: Փաստորեն, տապալվեց «Արշակի» ամերիկյան բեմադրությունը: Հույս ունեինք, որ «Արշակ Բ»-ն իր աստեղային կյանքը կստեղծի Հայաստանում, Ազգային թատրոնում, բայց, դժբախտաբար, 2007-ի երևանյան բեմադրությունը ձախողվեց՝ չպահպանելով օպերայի անհրաժեշտ որակը:

Գրեթե բոլոր բեմադրություններում հեղինակները ցուցաբերել են անհատական մոտեցում, հեղինակային մտահղացումներ և նորամուծություններ, դարձել «Արշակ Բ»-ի «հեղինակակիցները»: Գրքի հեղինակ Աննա Ասատրյանը նման «լուծումներին» դեմ է:

Երաժշտագետ Աննա Ասատրյանի «Արշակ Բ» օպերային նվիրված գիրքը հիմնարար մենագրություն է, լայնածավալ, խոր ուսումնասիրություն: Նրա աշխատանքն ազգանվեր երաժշտագետին արժանի գործ է և հրատարակությունը պետք է ողջունել:

ՌՈՒԲԵՐՏ ԴԱՎԹՅԱՆ